

Ֆինանսական միջնորդների շրջանակ (FIF) – ԵԲ վարկ- ԱԿԲԱ բանկ (EFSD+1)

Երկիր

Հայաստան

Ծրագրի համար

56536

Բիզնես ոլորտ

Դեպոզիտային վարկ (բանկեր)

Ծանուցման տեսակ

Մասնավոր

Բնապահպանական կատեգորիա

ՖՀ

Հաստատման ամսաթիվ

Սեպտեմբերի 24, 2025 թ.

Կարգավիճակ

Ուսումնասիրության փուլում

Անգլերեն տարբերակի**հրապարակման ամսաթիվ**

Օգոստոսի 20, 2025

Ծրագրի նկարագրություն

Մինչև 40 միլիոն ԱՄՆ դոլարի արժողությամբ առաջնային վարկի տրամադրում «ԱԿԲԱ» բանկին Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի (ՎԶԵԲ) կողմից՝ «Երիտասարդները բիզնեսում» («ԵԲ») կովկասյան ծրագրի շրջանակներում, որի նպատակն է Հայաստանում երիտասարդների կողմից ղեկավարվող կամ երիտասարդների սեփականությամբ միկրո, փոքր և միջին ձեռնարկություններին աջակցելը:

Ծրագրի նպատակները

Ծրագիրը փորրձնական կարգով կիրականացնի «ԵԲ» վարկային ծրագիրը Հայաստանում՝ երիտասարդների կողմից ղեկավարվող միկրո, փոքր և միջին ձեռնարկությունների համար վարկատեսակների սակավ առկայության խնդիրը լուծելու և դրանց աճի կառուցվածքային խոչընդոտները վերացնելու նպատակով: Այն կկենտրոնանա երիտասարդներին ուղղված կայուն վարկավորման համար անհրաժեշտ բանկային ենթակառուցվածքների կառուցման և ներդրման վրա, կբարձրացնի «ԱԿԲԱ» բանկի կարողությունները՝ անհատականացված ֆինանսական պրոդուկտներ և աջակցության ծառայություններ մատուցելու,՝ վերջնականապես ունենալով խթանել երիտասարդների երկարաժամկետ ընդգրկումը Հայաստանի ՄՓՄՁ շուկայում:

Անցումային ազդեցություն

Ծրագրի անցումային ազդեցությունը բխում է դրա ներառական և մրցունակ հատկանիշներից: Ակնկալվում է, որ ծրագրի արդյունքում կավելանան երիտասարդների կողմից ղեկավարած ՄՓՄՁ-ների վարկավորում երկրում, կխթանվեն «ԱԿԲԱ» բանկին կարողությունների զարգացումը՝ նպաստելով հմտությունների փոխանցմանը երիտասարդ գործարարներին և

դեկլարաներին Հայաստանում:

Հաճախորդի վերաբերյալ տեղեկատվություն

ԱԿԲԱ ԲԱՆԿ ԲԲԸ

ԱԿԲԱ բանկը հանդիսանում է Հայաստանի բանկային համակարգի կարևոր դերակատարներից մեկը՝ 2024 թ-ի ավարտի դրությամբ զբաղեցնելով 3-րդ հորիզոնականը ընդհանուր ակտիվների, տրամադրված վարկերի և դեպոզիտների ծավալով՝ յուրաքանչյուր սեզամենտում ունենալով ավելի քան 8% շուկայի մասնաբաժին: Բանկը գործունեություն է ծավալում Հայաստանի բոլոր մարզերում՝ 65 մասնաճյուղի և ավելի քան 1800 աշխատակիցների միջոցով:

ՎՁԵԲ-ի կողմից տրամադրվող ֆինանսավորում

40,000,000.00 ԱՄՆ դոլար

Ծրագրի ընդհանուր արժեք

40,000,000.00 ԱՄՆ դոլար

Հավելյալություն

Նորարարական ֆինանսական կառուցվածքներ և/կամ գործիքներ. ՎՁԵԲ-ն առաջարկում է տեղական արժույթով ֆինանսավորում, որը շուկայում հասանելի չէ նման պայմաններով և դրույթներով:

Գիտելիք, նորարարություն և կարողությունների զարգացում. ՎՁԵԲ-ը տրամադրում է մասնագիտական փորձառություն, նորարարական մոտեցումներ, գիտելիք և կարողություններ, որոնք կարևոր նշանակություն ունեն ծրագրի նպատակները ժամանակին իրագործելու նպատակով, ներառյալ աջակցության տրամադրումը հաճախորդի կարողությունների բարելավմանն ապագա կառուցվածքային ֆինանսավորման ծրագրերի համար: «Երիտասարդները բիզնեսում» ծրագիրը նախատեսում է կարողությունների զարգացում ինչպես «ԱԿԲԱ» բանկին այնպես էլ երիտասարդների կողմից դեկլարացիայի ՄՓՄՁ-ների համար՝ վերապատրաստումների, խորհրդատվական աջակցության և թվային ծառայությունների վրա հիմնված մոտեցումների միջոցով՝ տարածաշրջանային ընդգրկվածությունն ընդլայնելու և երիտասարդ ձեռնարկատերերին ներգրավելու նպատակով:

Ստանդարտների սահմանում. աջակցություն ծրագրերին և հաճախորդներին՝ հասնելու ներառականության ավելի բարձր չափանիշների և/կամ հավասար հնարավորություններով գործողությունների ծրագրերի իրականացման նպատակով:

Բնապահպանական և սոցիալական ազդեցության ամփոփ նկարագիր

Դասվել է FI կատեգորիայի (Բնապահպանական և սոցիալական քաղաքականություն, 2024թ):

«ԱԿԲԱ» բանկը ՎՁԵԲ-ի ընթացիկ հաճախորդներից է և գործում է բնապահպանական և սոցիալական (Բ և Ս) չափանիշների համապատասխան՝ իր ընթացիկ պարտավորությունների շրջանակում: Վարկային միջոցները կուղղվեն երիտասարդների կողմից դեկլարավորվող կամ երիտասարդներին պատկանող իրավասու միկրո, փոքր և միջին ձեռնարկությունների ֆինանսավորմանը:

Ակնկալվում է, որ ենթածրագրերը կունենան ցածրից միջին ԲևՍ ռիսկեր, որոնք հիմնականում պայմանավորված են հաճախորդի՝ Բնապահպանական և սոցիալական կառավարման համակարգի (ԲևՍ) ներդրման կարողության, տրամադրվող ենթավարկերից բխող հնարավոր ազդեցությունների և մատակարարման շղթայի հետ կապված ռիսկերով: «ԱԿԲԱ» բանկը պետք է պահպանի և արդյունավետ կերպով գործարկի իր ԲևՍ կառավարման համակարգը՝ ԲևՍ ռիսկերն ու ազդեցությունները, մարդկային ռեսուրսների (ՄՌ) քաղաքականությունը, ներքին բողոքարկման մեխանիզմը, ինչպես նաև աշխատանքի անվտանգության և առողջության ապահովման ընթացակարգերը գնահատելու, կառավարելու և վերահսկելու նպատակով՝ համապատասխան ՎՉԵԲ-ի ԲևՍ պահանջների 2-րդ, 4-րդ և 9-րդ կետերին՝ 2024 թ. ԲևՍ քաղաքականությանը համահունչ:

Կանաչ գնահատում

Ծրագիրը դիտարկվում է որպես համահունչ Փարիզի համաձայնագրին՝ հիմնվելով ՎՉԵԲ-ի Փարիզի համաձայնեցման մոտեցման կիրառման վրա, որը վերաբերվում է անուղղակի ֆինանսավորմամբ ներդրումներին և ներառում է՝ (i) հստակ սահմանված վարկային միջոցների օգտագործման նպատակ, (ii) կիրառելի բացառություններ և (iii) ՎՉԵԲ-ի հետ համագործակցելու վերաբերյալ հաճախորդի հանձնառություն, որն ուղղված է ցածր ջերմոցային գազերի արտանետումներով և կլիմայական կայուն զարգացմամբ անցման ուղուն ֆինանսական հոսքերը համապատասխանեցնելուն:

Տեխնիկական աջակցություն և դրամաշնորհի ֆինանսավորում

Վարկային ծրագրին կտրամադրվի հետևյալ աջակցությունը. (i) «ԱԿԲԱ» բանկի օգտին տրամադրվող առաջին վնասի երաշխիք որը ֆինանսավորվում է ԵՄ-ի կողմից՝ Եվրոպական կայուն զարգացման հիմնադրամ պլյուս (EFSD+) ծրագրի շրջանակում, (ii) «ԱԿԲԱ» բանկի օգտին տրամադրվող արդյունքահեն փոխհատուցման բաղադրիչով, որն ֆինանսավորվում է ԵՄ/SSF-ի կողմից, (iii) «ԱԿԲԱ» բանկին տրամադրվող կարողությունների զարգացման և տեխնիկական աջակցության ծառայություններ, որոնք ֆինանսավորվում են ԵՄ/SSF-ի կողմից, (iv) և ԵՄ-ի կողմից ֆինանսավորվող «Փոքր բիզնեսներին խորհրդատվություն» (ASB) ծրագրի շրջանակում տրամադրվող տեխնիկական աջակցություն: Տեխնիկական աջակցության այս համակցված բաղադրիչները կօգնեն «ԱԿԲԱ» բանկին բարելավել իր ներառական ֆինանսավորման չափանիշները՝ բարելավելով երիտասարդ ձեռնարկատերերի կարիքների վերաբերյալ ոչ բավարար իրազեկվածությունը և ընկալումը:

Ընկերության կոնտակտային տվյալները

Անժելիկա Բաղրամյան

Anzhelika.Baghramyan@acba.am

+37410318888

www.acba.am

Հայաստան, ք. Երևան 0002, Արամի փողոց 82-84

ԾԱՓ-ի վերջին թարմացում

Անցումային շրջանի ընկալումը

[Վյատեր](#) կարող էք լրացուցիչ տեղեկություններ գտնել առ այն, թե ինչ մոտեցումներ է կիրառում ՎՉԵԲ-ը անցումային շրջանում առաջընթացի վրա ազդեցությունը չափելու համար:

Բիզնես հնարավորություններ

Բիզնես հնարավորությունների կամ գնումների համար դիմե՛ք հաճախորդի ընկերությանը:

ՎՉԵԲ-ի հետ կապված (գնումներին չառնչվող) բիզնես հնարավորությունների համար դիմե՛ք.

Հեռ.՝ +44 20 7338 7168

Էլ-փոստ՝ projectenquiries@ebrd.com

Պետական ոլորտում ծրագրերի համար այցելե՛ք [ՎՉԵԲ-ի գնումներ](#):

Հեռ.՝ +44 20 7338 6794

Էլ-փոստ՝ procurement@ebrd.com

Ընդհանուր հարցումներ

Կարող եք անել կոնկրետ հարցումներ՝ օգտագործելով [ՎՉԵԲ-ի հարցումների ձևաթուղթը](#):

Բնապահպանական և սոցիալական քաղաքականություն (ԲՍՔ)

[ԲՍՔ-ն](#) և դրա հետ կապված՝ Գործունեության նկատմամբ պահանջները (ԳՊ-ներ) սահմանում է այն ուղիները, որոնց միջոցով ՎՉԵԲ-ն իրականացնում է իր հանձնառությունը՝ խթանել «Էկոլոգիապես առողջ և կայուն զարգացումը»: ԲՍՔ-ն և ԳՊ-ները պարունակում են հատուկ դրույթներ, ըստ որոնց հաճախորդները պետք է համապատասխանեն տեղեկությունների հրապարակայնացման և խորհրդատվության մասին ազգային օրենքների կիրառվող պահանջներին, ինչպես նաև ստեղծեն բողոքարկման մեխանիզմ՝ շահագրգիռ կողմերի մտահոգությունները և բողոքները ստանալու և լուծումները դիտարկելու նպատակով, մասնավորապես, հաճախորդի և ծրագրի կողմից բնապահպանական և սոցիալական ասպեկտների կատարողականի վերաբերյալ: Կախված ծրագրի բնապահպանական և սոցիալական ռիսկերի և ազդեցությունների բնույթից և մասշտաբից, ՎՉԵԲ-ը լրացուցիչ պահանջում է, որ իր հաճախորդները, անհրաժեշտության դեպքում, տեղեկություն հրապարակեն ծրագրից բխող ռիսկերի և ազդեցությունների մասին կամ բովանդակալից խորհրդակցություններ անցկացնեն շահագրգիռ կողմերի հետ, դիտարկեն նրանց կարծիքներն ու արձագանքն դրանց:

Այս կապակցությամբ ՎՉԵԲ-ի գործելակերպի վերաբերյալ ավելի մանրամասն տեղեկությունները ներկայացված են [ԲՍՔ](#)-ում:

Բարեվարքություն և համապատասխանություն

ՎԶԵԲ-ի՝ Համապատասխանության վերահսկման գլխավոր տնօրենի գրասենյակը (ՀՎԳՏԳ) խթանում է լավ կառավարումը և ապահովում բարեվարքության բարձրագույն չափանիշների կիրառումը Բանկի գործունեության բոլոր ասպեկտներում՝ միջազգային լավագույն փորձի համաձայն: Բանկի բոլոր հաճախորդների վերաբերյալ իրականացվում է բարեվարքության պահանջներին համապատասխանության ստուգում-ուսումնասիրություն՝ համոզվելու, որ ծրագրերը չեն պարունակում Բանկի համար անընդունելի ռիսկեր բարեվարքության կամ հեղինակության առումով: Բանկի համոզմամբ, ծրագրի գնահատման և հաստատման փուլերում խնդիրների հայտնաբերումն ու լուծումը Բանկի գործարքների բարեվարքության ապահովման ամենաարդյունավետ միջոցներն են: ՀՎԳՏԳ-ն առանցքային դեր է կատարում պաշտպանիչ այս գործողություններում, ինչպես նաև օգնում է վերահսկել բարեվարքությանն առնչվող ռիսկերը ծրագրերի հետևերդրումային փուլերում:

ՀՎԳՏԳ-ն նաև պատասխանատու է ՎԶԵԲ-ի կողմից ֆինանսավորվող ծրագրերում կեղծիքի, կոռուպցիայի և չարաշահման կապակցությամբ մեղադրանքների հետաքննության համար: Ցանկացած անձ, ինչպես Բանկի ներսում, այնպես էլ նրանից դուրս, ով կասկածներ ունի, որ առկա են կեղծիքի կամ կոռուպցիայի դեպքեր, պետք է գրավոր զեկույց ներկայացնի Համապատասխանության վերահսկման գլխավոր տնօրենին էլ-փոստով՝ compliance@ebrd.com: Խնդիրների մասին բոլոր զեկույցները կքննվեն ՀՎԳՏԳ-ի կողմից՝ հետագա քայլերը որոշելու նպատակով: Քննվելու են բոլոր զեկույցները, այդ թվում՝ անանուն զեկույցները: Չեկույցները կարող են ներկայացնել Բանկի կամ Բանկի գործունեության ցանկացած երկրի լեզվով: Տեղեկությունը տրամադրելիս անհրաժեշտ է դրսևորել բարեխիղճ մոտեցում:

Տեղեկությունների հասանելիության քաղաքականություն (ՏՀՔ)

ՏՀՔ-ն սահմանում է, թե ինչպես է ՎԶԵԲ-ը հրապարակայնացնում տեղեկությունները և խորհրդակցում շահագրգիռ կողմերի հետ, որպեսզի 2020թ. հունվարի 1-ից ուժի մեջ մտնելուց հետո նպաստի ՏՀՔ-ի ռազմավարությունների, քաղաքականությունների և գործառնությունների մասին ավելի լավ իրազեկմանն ու ընկալմանը: Խնդրում ենք այցելել [Տեղեկությունների հասանելիության քաղաքականության](#) կայքէջը՝ պարզելու, թե ինչ տեղեկություն կա ՎԶԵԲ-ի կայքում:

Տեղեկություններ ստանալու համար կարող եք կոնկրետ հարցումներ ներկայացնել՝ օգտագործելով [ՎԶԵԲ-ի հարցումների ձևաթուղթ](#):

Ծրագրերի հաշվետվողականության անկախ մեխանիզմ (ԾՀԱՄ)

Եթե Հաճախորդի կամ Բանկի հետ բնապահպանական և սոցիալական ասպեկտների կամ հրապարակայնացման հետ կապված խնդիրների լուծմանն ուղղված ջանքերն (օրինակ, Հաճախորդի՝ Ծրագրի մակարդակով բողոքարկման մեխանիզմի կամ Բանկի ղեկավարության հետ անմիջական ներգրավման միջոցով) ապարդյուն են, ապա անհատներն և կազմակերպությունները կարող են դիմել ՎԶԵԲ-ի՝ Ծրագրերի հաշվետվողականության անկախ մեխանիզմին (ԾՀԱՄ)՝ իրենց մտահոգող խնդիրների լուծումը ստանալու համար:

ԾՀԱՄ-ն անկախ եղանակով քննում է Ծրագրի հետ կապված խնդիրները, որոնք, ենթադրաբար, վնաս են պատճառել (կամ, հավանաբար, կարող են վնաս պատճառել): Մեխանիզմի նպատակն է. աջակցել Ծրագրի շահագրգիռ կողմերի միջև երկխոսությանը՝ շրջակա միջավայրի, սոցիալական ասպեկտների և հրապարակայնացման հետ կապված խնդիրները լուծելու նպատակով, պարզել, արդյոք Բանկը համապատասխանել է իր իսկ [Բնապահպանական և սոցիալական քաղաքականությանը](#) կամ իր՝ [Տեղեկությունների հասանելիության քաղաքականության](#)՝ Ծրագրին վերաբերող կոնկրետ դրույթներին, և, անհրաժեշտության դեպքում, վերացնել այդ քաղաքականություններին վերաբերող ցանկացած անհամապատասխանություն՝ միաժամանակ կանխելով Բանկի անհամապատասխանության դեպքերն ապագայում:

Խնդրում ենք այցելել [Ծրագրերի հաշվետվողականության անկախ մեխանիզմի կայքէջը](#)՝ իմանալու ավելին ԾՀԱՄ-ի և նրա լիազորությունների մասին, ինչպես [Ղիմում ներկայացնել](#) ստուգում անցկացնելու համար, կամ կապ հաստատել ԾՀԱՄ-ի հետ էլ-փոստով ipam@ebrd.com՝ ԾՀԱՄ-ի և ղիմում ներկայացնելու վերաբերյալ ուղղորդում և լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար: